

**Ս.Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Լ.Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, Մ.Գ. ՏԱՎԱՐԱՑՅԱՆ,
Ս.Մ. ԲԱԽՇՅԱՆ, Ա.Ա. ԲԱԴԱՍՅԱՆ**

**ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒԳԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Շուկայական մրցակցությանը դիմակայելու և շահութաբեր բիզնեսի հաջողությունն ապահովելու համար անհրաժեշտ են ընկերության հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշների դինամիկ վերլուծություն և դրա հիման վրա՝ այդ ցուցանիշների բարելավման ուղղությամբ քաղաքականության մշակում ու իրականացում: Ներկայացվել են Հայաստանի ամենախոշոր լեռնամետալուրգիական ընկերության՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծությունը և դրանց բարելավման ուղիները:

Առանցքային բաներ. հանքի արտադրական հզորություն, աշխատանքի արտադրողականություն, մշակման ինտենսիվություն, ինքնարժեք, ծախսեր, շահույթ:

Տնտեսավարող սուբյեկտների գործունեության հիմնական նպատակը նվազագույն ռեսուրսներով առավելագույն շահույթի ապահովումն է: Այս համատեքստում կարևոր տեղ է զբաղեցնում լեռնամետալուրգիական ընկերության ելակետային այնպիսի ցուցանիշների վերլուծությունը, որոնք պայմանավորում են ցանկալի արդյունքի ապահովումը: Այդպիսի ցուցանիշներից են հանքի արտադրական հզորությունը, աշխատանքի արտադրողականությունը, ինքնարժեքը, ծախսերը, որոնց գիտականորեն հիմնավորված որոշումն ու իրականացումը կարող են ապահովել բարձր շահույթ և շահութաբերություն:

Արտադրական հզորությունը ձեռնարկության գլխավոր տեխնիկատեխնոլոգիական և տնտեսական պարամետրն է, որը հիմք է արտադրական ծրագրերի և պլանների իրագործման համար: Այն ցույց է տալիս կազմակերպության ներուժը՝ կարողությունը: Արտադրական կարողության որոշումը շատ կարևոր և համալիր հարց է, որն առաջին հերթին պայմանավորված է արտադրության բնույթով: Այդ առումով խիստ առանձնահատուկ է ընդերքի յուրացման արդյունաբերությունը [1]:

Հանքի (լեռնահարստացուցիչ կոմբինատի) արտադրական հզորությունը արտահայտվում է արդյունաբերական նշանակությամբ հանքաքարի արդյունահանման տարեկան քանակով: Այն կախված է բազմաթիվ միջազգային, բնակլիմայական, երկրաբանական, լեռնատեխնիկական, տնտեսագիտակազմակերպչական և բնապահպանական բնույթի գործոններից, որոնցից հիմնականներն են.

▪ տվյալ հանքային հումքի (խտանյութի, մետաղի, պատրաստի արտադրանքի), պահանջարկը ներքին և արտաքին շուկաներում,

- տվյալ հանքավայրի ընդերքում հետախուզված և հաստատված հանքահումքային պաշարները (որակը և քանակը) և դրանց աճի հեռանկարները,
- լեռնահարստացուցիչ և լեռնամետալուրգիական ձեռնարկության կառուցման և շահագործման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումները,
- ապագա ձեռնարկության տնտեսական ցուցանիշների համակարգը, հատկապես՝ արտադրանքի ինքնարժեքը, շահույթը և շահութաբերությունը,
- բնապահպանական խնդիրները և դրանց լուծման հետ կապված անհրաժեշտ ծախսերը,
- ձեռնարկության կառուցման և շահագործման տևողությունը [2]:


Լեռնահարստացուցիչ կոմբինատի արտադրական հզորությամբ են պայմանավորված՝

- ✓ ձեռնարկության տնտեսական ցուցանիշները, մասնավորապես ներդրումների ծավալը, արտադրանքի ինքնարժեքը, շահույթը և շահութաբերության աստիճանը,
- ✓ աշխատողների թիվը և աշխատանքի արտադրողականությունը,
- ✓ հարստացուցիչ ֆաբրիկայի և մետալուրգիական արտադրամասի հզորությունը,
- ✓ հանքավայրի բացման և լեռնակապիտալ ու նախապատրաստական (մակաբացման) աշխատանքների ծավալը,
- ✓ արտադրական կառույցների, հիմնական և օժանդակ արտադրամասերի ծավալները,
- ✓ արտադրական մեքենասարքավորումների և տրանսպորտային միջոցների քանակն ու ծավալները,
- ✓ կուլտուր-կենցաղային սպասարկման, կրթական և բնակարանային շինությունների ծավալները,
- ✓ բնապահպանական ծրագրերի ծավալները:

Աշխատանքի արտադրողականությունը յուրաքանչյուր ձեռնարկության կարևոր տնտեսական ցուցանիշն է, որը բնութագրում է աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Այդ ցուցանիշը մեկ աշխատողի աշխատանքի արդյունատարությունն է միավոր ժամանակում: Ցանկալի է, որ բոլոր տեսակի նյութական արժեքների և ծառայությունների ծավալներն աճեն՝ շնորհիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման:

Վերլուծելով ԶՊՄԿ ՓԲԸ-ի 2014-2019թթ. փաստացի տվյալները, տեսնում ենք, որ ձեռնարկության արտադրական հզորությունը տարեցտարի աճելով՝ 2019թ-ին հասել է 22մլն տոննայի: Եվ չնայած դրան, աշխատողների թվաքանակը 2019թ-ին 2018-ի համեմատ նվազել է 631 մարդով, մասնավորապես՝

բանվորների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ նվազել է 4%-ով (3145 բանվորից դառնալով 2558): Ձեռնարկության արտադրական հզորության կախվածությունն աշխատողների թվաքանակից և մեկ աշխատողի աշխատանքի արտադրականությունից ներկայացնենք գրաֆիկի տեսքով (նկ. 1):



Նկ. 1. Աշխատանքի արտադրողականության կախվածությունը աշխատողների թվաքանակից


Արտադրական կազմակերպությունների գործունեությունը բնութագրող գլխավոր ցուցանիշներից է արտադրանքի **ինքնարժեքը**: Արտադրանքի ինքնարժեքի մակարդակից է կախված կազմակերպության ֆինանսական արդյունքը, այսինքն՝ ինքնարժեքը գնագոյացնող և եկամտագոյացնող հիմնական գործոն է, ուստի ինքնարժեքի վերլուծությունը թույլ է տալիս, մի կողմից՝ տալ ռեսուրսների օգտագործման արդյունավետության ընդհանրացնող գնահատական, մյուս կողմից՝ բացահայտել եկամտի մեծացման և միավոր արտադրանքի գնի իջեցման ռեզերվները: Արտադրանքի ինքնարժեքը ներկայացնում է կազմակերպության կողմից արտադրանքի արտադրության ու իրացման համար կատարվող ծախսերի հանրագումարը՝ դրամական արտահայտությամբ (աղ. 1) [3]:

ՀՊՄԿ ՓԲԸ-ի ապրանքային արտադրանքի ինքնարժեքն ըստ առանձին ծախսերի տարրերի

	2018	2019	Շեղում	
			Բացարձակ	Հարաբերական
Լյուրեր	30510 915	43969 205	13458 290	44
Աշխատավարձ	17312 329	25205 361	7893 032	46
Ստացված ծառայություններ	19831 873	17577 603	-2254 270	- 11
Վերամշակման ծախսեր	13230 281	16057 261	2826 980	21
Մաշվածություն	10555 435	14648 587	4093 152	39
Էլեկտրականություն և գազ	10386 107	12462 773	2076 666	20
Բնապահպանական հարկեր	49 483	69 931	20 448	41
Այլ ծախսեր	333 867	444 410	110 543	33
Ընդամենը արտադրական ինքնարժեք	102 210 290	130 435 131	28224 841	28
Իրացման ծախսեր	10 252 977	12 638 613	2 385 636	23
Վարչական ծախսեր	14 339 312	14 945 937	606 625	4
Ընդամենը	126 802 579	158 019 681	31 217 102	25

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ ինքնարժեքը կազմող ծախսերի բոլոր հոդվածներն աճել են, միայն «ստացված ծառայություններ» հոդվածի գծով գրացվել է նվազում 11%-ով: Իսկ ամենամեծ չափով ավելացել են բնապահպանական հարկերը և աշխատավարձը՝ համապատասխանաբար 44%-ով և 46%-ով:

Գրաֆիկորեն ներկայացնենք 2019թ-ի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը (ծախսերն ըստ տեսակարար կշիռների) (նկ. 2):



Նկ. 2. ԶՊՄԿ ՓԲԸ 2019թ.-ի ապրանքային արտադրանքի ինքնարժեքի կառուցվածքը

Ինչպես երևում է նկ. 2-ի դիագրամից, 2019թ-ին ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի ինքնարժեքի կազմում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ծախսերը նյութերի և աշխատավարձի գծով ծախսերն են, որոնք համապատասխանաբար կազմել են 24% և 14%:

ԶՊՄԿ ՓԲԸ-ի առանձին արտադրատեսակների ինքնարժեքների վերլուծություն: Շուկայական տնտեսության պայմաններում արտադրանքի ինքնարժեքի ավելի խոր ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն յուրաքանչյուր արտադրատեսակի միավորի փաստացի ինքնարժեքի հաշվառումը և դրա վերլուծությունը, որը հնարավորություն կտա ռեալ գանահատել դրանց շահութաբերությունը և բացահայտել ծախսերի իջեցման լրացուցիչ ռեզերվներ: Յուրաքանչյուր արտադրատեսակի գծով կալկուլյացիոն հաշիվները միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերի փաստացի մակարդակը համեմատում են պլանայինի հետ, ինչպես նաև նախորդ տարիների հետ և՛ ամբողջությամբ, և՛ ծախսերի առանձին հոդվածների գծով: Արտադրատեսակի ինքնարժեքի վրա ազդող առաջին կարգի գործոններն են արտադրության ծավալը, հաստատուն ծախսերի մեծությունը, միավոր արտադրանքին ընկնող փոփոխուն ծախսերի գումարը: Այդ գործոնների ազդեցությամբ միավոր արտադրանքի ինքնարժեքի մակարդակի փոփոխության ուսումնասիրությունը կատարվում է գործնային մոդելի միջոցով [4] (աղ. 2 և 3):

Մոլիբդենի խտանյութի ինքնարժեքի գործոնային վերլուծություն

Ցուցանիշներ	Պլանային	Փաստացի	Շեղում(+,-)
Մոլիբդենի խտանյութի թողարկման ծավալ,տ(Q)	10 165	27 007	16 842
Հաստատուն ծախսերի գումարը, հազ. դրամ,(A)	6 803 761	8 644 179	1 840 418
Միավոր արտադրանքին ընկնող փոփոխուն ծախսերի գումար (հազ. դրամ)(x)	2 677	1 280	-1 397
1տ մոլիբդենի խտանյութի ինքնարժեք(դրամ)(C)	34 018 807	43 220 897	9 202 090

$$C_{\text{ուլ}} = \frac{A_{\text{ուլ}}}{Q_{\text{ուլ}}} + X_{\text{ուլ}} = 6803761/10165 + 2677 = 3346,3 \text{ հազ. դրամ}$$

$$C_1 = \frac{A_{\text{ուլ}}}{Q_{\text{փ}}} + X_{\text{ուլ}} = 6803761/27007 + 2677 = 2928.9 \text{ հազ. դրամ}$$

$$C_2 = \frac{A_{\text{փ}}}{Q_{\text{փ}}} + X_{\text{ուլ}} = 8644179/27007 + 2677 = 2997 \text{ հազ. դրամ}$$

$$C_{\text{փ}} = \frac{A_{\text{փ}}}{Q_{\text{փ}}} + X_{\text{փ}} = 8644179/27007 + 1280 = 1600 \text{ հազ. դրամ}$$

Ինքնարժեքի փաստացի մեծության շեղումը պլանայինից կկազմի.

$$\Delta C = C_{\text{փ}} - C_{\text{ուլ}} = 1600 - 3346.3 = \downarrow -1746.3 \text{ հազ. դրամ}$$

Այդ թվում տեղի են ունեցել.

$$\Delta C(Q) = C_1 - C_{\text{ուլ}} = 2928.9 - 3346.3 = \downarrow -417.4 \text{ հազ. դրամ}$$

$$\Delta C(A) = C_2 - C_1 = 2997 - 2928.9 = \uparrow 68.1 \text{ հազ. դրամ}$$

$$\Delta C(X) = C_{\text{փ}} - C_2 = 1600 - 2997 = \downarrow -1397 \text{ հազ. դրամ}$$

Այսպիսով, մոլիբդենի խտանյութի միավորի ինքնարժեքի -1746.3 հազ. դրամ նվազումը տեղի է ունեցել արտադրանքի ծավալի 16842 տոննայով ավելացման հետևանքով: Ինքնարժեքը կրճատվել է -417.4 հազ դրամով՝ հաստատուն ծախսերի 1,840,418 դրամով աճի հետևանքով, արտադրանքի ինքնարժեքը աճել է 68.1 հազ. դրամով, տեսակարար փոփոխուն ծախսերի 1397 դրամով նվազման հետևանքով ինքնարժեքը կրճատվել է:

Պղնձի խտանյութի ինքնարժեքի գործոնային վերլուծություն

Ցուցանիշներ	Պլան	Փաստացի	Շեղում(+,-)
պղնձի խտանյութի թողարկման ծավալ, տ(Q)	244 871	209 038	-35 833
հաստատուն ծախսերի գումարը (հազար դրամ) (A)	13 813 698	17 550 304	3 736 606
միավոր արտադրանքին ընկնող փոփոխուն ծախսերի գումար (հազար դրամ) (x)	226	336	110
1տ պղնձի խտանյութի ինքնարժեք (դրամ) (C)	69 068 488	87 751 519	18 683 031

$$C_{\text{պլ}} = \frac{A_{\text{պլ}}}{Q_{\text{պլ}}} + X_{\text{պլ}} = 13813698/244871 + 226 = 282.4 \text{ հազ. դրամ}$$

$$C_1 = \frac{A_{\text{պլ}}}{Q_{\text{փ}}} + X_{\text{պլ}} = 13813698/209038 + 226 = 292 \text{ հազ. դրամ}$$

$$C_2 = \frac{A_{\text{փ}}}{Q_{\text{փ}}} + X_{\text{պլ}} = 17550304/209038 + 226 = 309.9 \text{ հազ. դրամ}$$

$$C_{\text{փ}} = \frac{A_{\text{փ}}}{Q_{\text{փ}}} + X_{\text{փ}} = 17550304/209038 + 336 = 419.9 \text{ հազ. դրամ}$$

Ինքնարժեքի փաստացի մեծության շեղումը պլանայինից կկազմի.

$$\Delta C = C_{\text{փ}} - C_{\text{պլ}} = 419.9 - 282.4 = \uparrow 137.5 \text{ հազ. դրամ}$$

Այդ թվում տեղի են ունեցել.

$$\Delta C(Q) = C_1 - C_{\text{պլ}} = 292 - 282.4 = \uparrow 9.6 \text{ հազ. դրամ}$$

$$\Delta C(A) = C_2 - C_1 = 309.9 - 292 = \uparrow 17.9 \text{ հազ. դրամ}$$

$$\Delta C(X) = C_{\text{փ}} - C_2 = 419.9 - 309.9 = \uparrow 110 \text{ հազ. դրամ}$$

Վերլուծության արդյունքում պարզվեց, որ պղնձի խտանյութի միավորի ինքնարժեքի 137.5 հազար դրամ աճը տեղի է ունեցել. 35,833 տոննայով արտադրանքի ծավալի կրճատման հետևանքով. ինքնարժեքը աճել է 9.6 հազար դրամով, հաստատուն ծախսերի 3,736,606 դրամի աճը հանգեցրել է ինքնարժեքի 17.9 հազար դրամով ավելացման, տեսակարար փոփոխուն ծախսի 110 հազ. դրամով աճի հետևանքով արտադրանքի ինքնարժեքը նույնպես աճել է:

Այսպիսով, ԶՊՄԿ ՓԲԸ-ն ինքնարժեքը կրճատելու համար պետք է մեծացնի արտադրության ծավալը, որն իր հերթին կհանգեցնի միավոր արտադրանքի մեջ հաստատուն ծախսերի տեսակարար կշռի նվազմանը: Դա կհանդիսանա ռեզերվ՝ ինքնարժեքի հետագա իջեցման համար:

Շահույթ: Լինելով տնտեսական գործունեության նպատակ՝ շահույթը արտադրողներին կողմնորոշում է նվազագույն ծախսերով առավելագույն օգուտ ձեռք բերելու գործողությունների, ռեսուրսների խնայողաբար օգտագործման, արտադրական կարողությունների անխափան գործողության ու տեխնոլոգիաների բարեփոխման, ինչպես նաև իրացման գործում ժամանակակից մակարդակներ ձեռք բերելուն: Ընդհանուր առմամբ շահույթը որոշակի ժամանակահատվածում գործունեության հետևանքով ստացած եկամուտների և նույն ժամանակահատվածում նույն գործունեության վրա կատարած բոլոր տեսակի ծախսերի տարբերությունն է [4]:


ԶՊՄԿ ՓԲԸ-ի 2019թ-ի շահույթի (վնասի) մակարդակը և դինամիկան բնորոշող ցուցանիշները ներկայացված են աղ. 4-ում:

Աղյուսակ 4

Շահույթի (վնասի) մակարդակի և դինամիկայի ցուցանիշները [5]

	Ցուցանիշների անվանումը	2018	2019	ՇԵՂՈՒՄԸ	
				Բացարձակ (հազ.դր)	Հարաբերական (%)
1	Իրացումից զուտ հասույթ	199,900,935	195,827,666	- 4,073,269	-2.04
2	Իրացված արտադրանքի ինքնարժեքը	103,087,295	130,972,416	27,885,121	27.05
3	Համախառն շահույթը /վնաս/	96,813,640	64,855,250	- 31,958,390	-33.01
4	Իրացման ծախսեր	10,252,977	12,638,613	2,385,636	23.27
5	Վարչական ծախսեր	14,339,312	14,945,937	606,625	4.23
6	Իրացումից շահույթ / վնաս/	72,221,351	37,270,700	- 34,950,651	-48.39
7	Գործառնական գործունեության շահույթ /վնաս/	32,905,823	845,256	- 32,060,567	-97.43
8	Ֆինանսական ծախսեր	12,395,745	8,852,826	- 3,542,919	-28.58
9	Այլ՝ ոչ գործառնական գործունեությունից շահույթ /վնաս/	- 394,771	257,970	652,741	-165.35
10	Սովորական / ֆինանսատնտեսական/ գործունեությունից շահույթ /վնաս/	24,272,085	- 7,151,425	- 31,423,510	-129.46
11	Զուտ շահույթ /վնաս/՝ նախքան շահութահարկը	24,272,085	- 7,151,425	- 31,423,510	-129.46
12	Զուտ շահույթ շահութահարկից հետո	15,538,242	-14,562,712	- 30,100,954	-193.72


Աղյուսակի տվյալներից հետևում է, որ հաշվետու ժամանակաշրջանում ձեռնարկության ստացած զուտ շահույթը շահութահարկի վճարումից հետո նվազել է -30,100,954 հազ. դրամով կամ -193,72%-ով, որը բավականին վատ արդյունք է:



Նկ. 3. ԶՊՄԿ ՓԲԸ-ի շահույթի դինամիկան

Ֆինանսական արդյունքների դինամիկայում կարող ենք առանձնացնել հետևյալ փոփոխությունները: Այսպես, իրացված արտադրանքի գծով ստացված համախառն շահույթը նվազել է 33%-ով, որն արդյունք է իրացունից զուտ հասույթի 2.04%-ով նվազման: Իրացումից շահույթի մեծությունը նվազել է 48%-ով, քանի որ իրացված արտադրանքի լրիվ ինքնարժեքում ներառված առևտրային և վարչական ծախսերի հարաբերական ավելացումը կազմել է 27%: Զուտ շահույթը (հարկումից հետո) նվազել է 94%-ով, գործառնական գործունեությունից ստացվող շահույթը կրճատվել է 97%-ով, և այլ՝ ոչ գործառնական գործունեությունից շահույթը՝ 65%-ով:

Բարձր ֆինանսատնտեսական ցուցանիշները պայմանավորել են այն իրողությունը, որ «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն հանդիսանում է ՀՀ խոշոր հարկատուներից մեկը [6] և մշտապես այդ ցանկում զբաղեցնում է առաջատար դիրք (նկ. 4):



Նկ. 4. ԶՊՄԿ ՓԲԸ-ի կողմից վճարված հարկերը և դիրքը ՀՀ խոշոր հարկատուների ցանկում

ԶՊՄԿ ՓԲԸ-ի իրացումից շահույթի գործոնային վերլուծություն: Հաշվետու ժամանակաշրջանի շահույթն արտահայտում է ձեռնարկության արտադրատնտեսական գործունեության ընդհանուր ֆինանսական արդյունքը: Դրա կազմում իր կարևոր ու ամենահիմնական տեղն ունի արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթը, որի մեծությունը կապված է արտադրանքի արտադրության և դրա իրացման գործընթացի հետ: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի համար կարևոր նշանակություն ունի, թե ինչպիսի գործոններ են ազդում իրացումից շահույթի գումարի ավելացման վրա կամ ինչ պատճառներով է շահույթի նվազեցում կատարվում [7]:

Ըստ գործող չափանիշների («Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության»)՝ արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթը (վնասը) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$F\mathcal{C} = F\mathcal{Q}\mathcal{Z} - (U\mathcal{P} + U\mathcal{D} + \mathcal{V}\mathcal{D}),$$

որտեղ $F\mathcal{Q}\mathcal{Z}$ -ն արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից զուտ հասույթն է, $U\mathcal{P}$ -ն՝ իրացվող արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեքը, $U\mathcal{D}$ -ն՝ առևտրային (իրացման) ծախսերը, $\mathcal{V}\mathcal{D}$ -ն վարչական ծախսերը:

$$F\mathcal{C}_{2018} = 199,900,935,000 - (103,087,295,000 - 10,252,977,000 - 14,339,312,000) = 72,221,351,000$$

$$F\mathcal{C}_{2019} = 195,827,666,000 - (130,972,416,000 + 12,638,613,000 + 14,945,937,000) = 37,270,700,000$$

Արտադրանքի իրացումից շահույթի աճի կարգավորման կարևորագույն պայմաններից են արտադրվող արտադրանքի ծավալի ավելացումը, արտադրանքի արտադրության և ապրանքափոխադրման ռիթմիկության ապահովումը, ինքնարժեքի իջեցումը, որակի և մրցունակության բարձրացումը, պահեստների ապահովվածությունն անհրաժեշտ քանակի պաշարներով, գնորդ-մատակարար փոխհարաբերություններում արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) դիմաց հաշվարկների ժամանակակից ձևերի (ֆակտորինգ, օվերդրաֆտ և այլն) կիրառումը [8]:

Արտադրանքի, ապրանքների աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթը բնութագրող հիմնական ցուցանիշները, ինչպես նաև դրանց դինամիկան որոշելու համար տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական պլանի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տվյալների հիման վրա

ներկայացնենք աղ. 5-ը, որտեղ արտացոլվում են իրացումից զուտ հասույթը, լրիվ ինքնարժեքը, ֆինանսական արդյունքն իրացումից (վնաս կամ շահույթ), ինչպես նաև իրացվող արտադրանքի շահութաբերության մակարդակը և իրացումից շահույթի տեսակարար կշիռը:

Աղյուսակ 5

Իրացումից շահույթի գործոնային վերլուծություն հազ.դր

Ցուցանիշների անվանումը	2018թ.	2019թ.
1. Իրացումից զուտ հասույթ	199,900,935	195,827,666
2. Լրիվ ինքնարժեքը, այդ թվում՝	127,679,584	158,556,966
- արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ինքնարժեք	103,087,295	130,972,416
- առևտրային ծախսեր	10,252,977	12,638,613
- վարչական ծախսեր	14,339,312	14,945,937
3. Իրացումից շահույթ (վնաս)	72,221,351	37,270,700
4. Իրացվող արտադրանքի, ապրանքների շահութաբերության մակարդակը, տող 3ա/տող 2ա*100%	56.56	23.51
5. Իրացումից շահույթի տեսակարար կշիռը, տող 3ա/տող1*100%	36.13	19.03

Բերված տվյալներից երևում է, որ ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի իրացումից շահույթը հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ նվազել է 34,950,651 հազ. դրամով կամ 48.39 %-ով:

Վերլուծենք այդ նվազման գործոնները.

$$F\bar{C}_{2018} = 72,221,351 \text{ հազ. դրամ,}$$

$$F\bar{C}' = F\bar{Q}'_{2019} - LF_{2018} = 195,827,666 - 127,679,584 = 68,148,082 \text{ հազ. դրամ}$$

$$F\bar{C}'' = F\bar{Q}''_{2018} - LF_{2019} = 199,900,935 - 158,556,966 = 41,343,969 \text{ հազ. դրամ}$$

$$F\bar{C}_{2019} = F\bar{Q}_{2019} - LF_{2019} = 195,827,666 - 158,556,966 = 37,270,700 \text{ հազ. դրամ}$$

Արտադրանքի իրացման ծավալի փոփոխությունը շահույթի վրա կարող է ունենալ կամ դրական, կամ բացասական ազդեցություն: Անշուշտ, բարձր շահութաբեր արտադրատեսակների իրացման ծավալի ավելացման հաշվին կմեծանա շահույթի գումարը:

Այսպիսով, ապրանքային արտադրանքի ծավալի աճի հետևանքով նախորդ տարվա համեմատությամբ հաշվետու տարում ԶՊՄԿ ՓԲԸ-ի արտադրանքի իրացումից շահույթը նվազել է՝

$$F\bar{C}' - F\bar{C}_{2018} = 68,148,082 - 72,221,351 = -4,073,269 \text{ հազ. դրամ:}$$

Շահույթի մեծությունը և արտադրանքի իրացման գների փոփոխությունն իրար ուղիղ համեմատական են: Գների բարձրացումը հանգեցնում է շահույթի

գումարի աճին և հակառակը: Գների վրա իրենց հերթին կարող են ազդել իրացվող արտադրանքի որակը, վաճառքի շուկաները, շուկայական մրցակցության աստիճանը, սղաճը և այլ գործոններ: Այդ գործոններից ամենակարևորը արտադրանքի որակի մակարդակն է, քանի որ բարձր որակով արտադրանքի համար սահմանվում են բարձր գներ և հակառակը:

Իրացված արտադրանքի ինքնարժեքը և շահույթը իրար նկատմամբ ունեն հակադարձ համեմատական կախվածություն. ինքնարժեքի կրճատումը նպաստում է շահույթի աճին և հակառակը:

Արտադրանքի ինքնարժեքի բարձրացման հետևանքով հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ ԶՊՄԿ ՓԲԸ-ի իրացումից շահույթը նվազել է 11,514,096,0 հազ. դրամով.

$$\text{ԻՇ}^{\text{ԻՇ}} - \text{ԻՇ}_{2018} = 41,343,969 - 72,221,351 = -30,877,382 \text{ հազ. դրամ:}$$

Արտադրանքի իրացումից ստացված շահույթի վրա ազդող գործոններն ամփոփ ներկայացված են աղ. 6-ում:

Աղյուսակ 6

Իրացումից ստացված շահույթի վրա ազդող գործոնների ամփոփ հաշվարկը

Գործոնները	Հաշվարկ	Գործոնների ազդեցության չափը
Արտադրանքի իրացման ծավալի փոփոխություն	ԻՇ ^{ԻՇ} -ԻՇ ₂₀₁₈	-4073269
Արտադրանքի ինքնարժեքի փոփոխություն	ԻՇ ^{ԻՇ} -ԻՇ ₂₀₁₈	-30877382
Ընդամենը	ԻՇ ₂₀₁₉ -ԻՇ ₂₀₁₈	-34950651

Վերլուծության ընթացքում քննարկված բոլոր գործոնների ազդեցության չափերի հանրահաշվական գումարը համընկնում է բազիսային տարվա համեմատությամբ հաշվետու տարում կազմակերպության շահույթի մեծության նվազման ընդհանուր գումարին:

Աղ. 6-ի հաշվարկային տվյալներից պարզվում է, որ հաշվետու տարում իրացումից զուտ հասույթը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 4,07 մլրդ. դրամով (195,827,666 հազ-199,900,935 հազ) կամ 2%-ով: Լրիվ ինքնարժեքն ավելացել է 30,877,382 հազ. դրամով կամ 24.18%-ով: Վերջնական արդյունքում՝ արտադրանքի, իրացումից զուտ շահույթը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 30.1 մլրդ դրամով կամ 93.72%-ով:

Իրացումից զուտ հասույթի և ստացվող շահույթի մեծության փոփոխությունների միջև կա ուղղակի համամասնական կախվածություն, այսինքն՝ որքան բարձր լինի իրացումից զուտ հասույթի գումարում շահույթի չափը կամ տեսա-

կարար կշիռը, կնշանակի, որ ձեռնարկությունն արտադրում է շահութաբեր արտադրատեսակներ:

Լեռնամետալուրգիական արտադրության արդյունավետության բարձրացումը մեծ նշանակություն ունի մեր հանրապետության տնտեսության համար, որը կարելի է ապահովել ընկերության ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Агошков М.И.** Определение производительности рудника.- М.: Металлургиздат, 1988.
2. **Գևորգյան Հ.Գ.** Լեռնամետալուրգիական ձեռնարկությունների տնտեսագիտություն. ուսումնական ձեռնարկ. - Երևան, 2013:
3. **Савицкая Г. В.** Экономический анализ //Новое знание.- 13-е издание, 2007.
4. **Գրիգորյան Լ.Հ.** Տնտեսական գործունեության վերլուծությունը արտադրական կազմակերպությունում.- Երևան: Տնտեսագետ, 2002:
5. <http://www.zcmc.am/arm/inestteorsarm/azdagir/>
6. <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists> - Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր:
7. **Բայադյան Ա.Հ.** Ձեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը.- Երևան, 2006:
8. **Առաքելյան Կ.Ա.** Կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծություն. - Երևան: Զանգակ-97, 2006:

**Տ.Ա. МКРТЧЯН, Լ.Ա. АЛАВЕРДЯН, М.Г. ТАВАРАЦЯН,
Տ.Մ. БАХШЯН, А.А. БАДАСЯН**

ПУТИ УЛУЧШЕНИЯ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКИХ ПОКАЗАТЕЛЕЙ ГОРНОМЕТАЛЛУРГИЧЕСКОЙ КОМПАНИИ

Чтобы противостоять рыночной конкуренции и обеспечить успех прибыльного бизнеса, необходимо динамически анализировать основные финансово-экономические показатели компании, на основе которых можно разработать и реализовать политику по улучшению этих показателей. В статье представлен анализ основных финансово-экономических показателей крупнейшего горнометаллургического предприятия Армении ЗАО «Зангезурский медномолибденовый комбинат» и показаны пути их улучшения.

Ключевые слова: производственная мощность рудника, производительность труда, интенсивность переработки, себестоимость, затраты, прибыль.

**S.A. MKRTCHYAN, L.A. ALAVERDYAN, M. G. TAVARATSYAN,
S.M. BAKHSHYAN, A.A. BADASYAN**

WAYS TO IMPROVE FINANCIAL AND ECONOMIC INDICATORS OF A MINING AND METALLURGICAL COMPANY

To resist market competition and ensure the success of a profitable business, it is necessary to dynamically analyze the main financial and economic indicators of the company, on the basis of which it is possible to develop and implement policies to improve these indicators. The article presents an analysis of the main financial and economic indicators of the largest mining and metallurgical enterprise in Armenia, Zangezur Copper-Molybdenum Combine CJSC and ways to improve them.

Keywords: production capacity of the mine, labor productivity, processing intensity, cost price, expenses, profit.

УДК 338.2

Т.А. БОНДАРСКАЯ

ПРИОРИТЕТНЫЕ НАЦИОНАЛЬНЫЕ ПРОЕКТЫ В ДЕЙСТВИИ (Тамбовский государственный технический университет, Россия)

Представлен анализ демографических показателей городских территорий Тамбовской области. Проведен сравнительный анализ реализации национального проекта «Демография». Определены территории-лидеры и проблемные муниципальные образования. Выработаны рекомендации по имеющимся неисполнениям данного федерального проекта в территориях. Для более подробного анализа по заявленной теме был выбран город Моршанск Тамбовской области.

Ключевые слова: национальный проект, демография, региональная политика, муниципалитеты, социально-экономическое развитие, города Тамбовской области.

Как известно, в России постоянно разрабатываются меры социальной поддержки, которые помогут сократить уровень бедности в стране.

«В России необходимо свести уровень бедности до минимума и вытащить из нее значительное число людей», - заявил 25 сентября 2021 года президент РФ Владимир Путин на встрече по видеосвязи с руководством партий, прошедших в Госдуму восьмого созыва.

Алексей Кудрин, глава Счетной палаты, полностью поддержал то, что было сказано президентом России Владимиром Путиным. При этом А. Кудрин подчеркнул, что это адекватные и посильные для страны цифры, которые «позволят снизить уровень бедности в два раза».

Российский лидер добавил, что необходимо также улучшить условия жизни, развития, обучения, «да и просто питания детей в семьях с низкими